ԲՅՈՒԼԵՏԵՆ

Մայիս 2026թ.

ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

2026 թ. մայիսի 25-ին անցկացվեց Պալատի հերթական ընդհանուր ժողովը Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների հեռակա հավաքի ձևով՝ էլեկտրոնային փոստով քվեարկության (հարցման) միջոցով՝ առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության մասնակիցների համատեղ ներկա լինելու:

Ժողովի ընթացքում հաստատվեցին «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության 2025 թվականի տարեկան գործունեության, 2025 թվականի գույքի օգտագործման, Խորհրդի և աշխատակազմի 2025 թվականի գործունեության, ինչպես նաև 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ Պալատի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Մայիսին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ 14.05.2026թ.-ին:

Նիստի օրակարգում ընդգրկված էր 5 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությանը, ինչպես նաև 2025թ. գույքի օգտագործման հաշվետվությանը հավանություն տալու և հերթական ժողովի հաստատմանը ներկայացնելու մասին որոշումները: Հաստատվեցին նաև Պալատի 2025թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **06.05.2026թ.-ին և 21.05.2026 թ.-ին**, որոնցում աուդիտորի որակավորում է շնորհվել 5, փորձագետ հաշվապահի որակավորում՝ 11 անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ **25.05.2026թ.-ին,** որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 6 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

13.04.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ - «ԱՄՍ 315, 330 — Բիզնես գործընթացներ, համապատասխան ներքին վերահսկողության միջոցներ և դրանց արդյունավետության ստուգում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Լիլիթ Մայիլյանը:**



14.05.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«ՖՀՄՍ 18 – Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**



18.05.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Լեռնիկ Հարությունյանը:**

21.05.2026թ.-ին տեղի է ունեցելՇՄԶ-««ՀՀ հարկային օրենսգրքի և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի, արժույթային վերահսկողությունը կարգավորող իրավական ակտերի շրջանակներում ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման ընթացակարգերի և արտարժույթով իրականացվող գործարքների հիմնական հարցերի և խնդիրների քննարկում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Յանիկյանը:**



21.05.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Օրենսդրական փոփոխություններ, հարկերը չվճարելու հանցագործության նոր շեմերը, հարկային մարմնի նոր մոտեցումները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Պետիկ Մկրտչյանը:**

Որակավորման շնորհում

Ս/թ. մայիսի 7-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված որակավորման կրթական ծրագրի դժվարին փուլը պատվով հաղթահարած և պահանջվող չափանիշներին համապատասխանության արդյունքում 29 աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած անձանց որակավորման վկայականների հանձնմանը: Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Պալատի նախագահ Մանվել Ղազարյանը, Որակավորման հանձնաժողովի նախագահ Արթուր Հարությունյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, որակավորում ստացած մասնագետները: Պալատի նախագահ Մանվել Ղազարյանը կարևորեց ոլորտը որակավորված մասնագետներով համալրելու, հանրությանը որակյալ, բարձրակարգ ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունը, վստահեցրեց, որ Որակավորման կրթական ծրագրի շրջանակում ձեռք բերված գիտելիքները, նոր հմտություններն ու կարողությունները մասնագիտության ոլորտում անպայման կապահովեն առաջընթացի և հաջողության վաղվա երաշխիքները:

Ա. Հարությունյանը վստահեցրեց, որ այդ ճանապարհը, որպես որակավորված մասնագետներ, նրանք կանցնեն նաև Պալատի անմիջական օժանդակությամբ՝ կազմակերպվող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների, տարբեր քննարկումների, սեմինարների, կլոր սեղանների միջոցով: Անդրադարձ կատարվեց նաև Պալատի անդամ որակավորված մասնագետների՝ դաշտում գործունեություն ծավալելու առումով օրենսդրորեն ամրագրված հնարավորություններին: Որակավորված մասնագետներին մաղթանքի ջերմ խոսքեր ուղղեց նաև Հ. Մնացականյանը:

Համագործակցության հուշագիր

2026թ. մայիսի 18-ին, կարևորելով գործընկերության և համագործակցության դերը Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման գործընթացում՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատը և «Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը կնքեցին Հուշագիր:
Երկուստեք ստանձնած պարտավորությունների շրջանակը շատ լայն է. աջակցություն շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների կազմակերպման գործընթացին՝ թեմաների առաջադրման և համապատասխան դասընթացավարների ներգրավման, որակավորման ծրագրում ներառված բարձր առաջադիմությամբ մասնակիցների պրակտիկայի կազմակերպման և աշխատանքի տեղավորման, Պալատի կողմից կազմակերպվող մասնագիտական քննարկումներին համապատասխան մասնագետների ներգրավվածության և այլ հարցերում:

Կողմերը նշեցին, որ Հուշագրի շրջանակներում ընդգրկված երկկողմ ծրագրերն ու գործարար մակարդակում դրանց կիրառման կոնկրետ քայլերը, նախատեսվող միջոցառումները, համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափերի որոնումները լավագույն երաշխիքն են այն կարևոր նպատակի իրականացման, որն ապահովելու է մասնագիտության վաղվա օրը: